ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

26.06.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 գնման պայմանագրի

ք. Երևան «27» «08» 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ը (այսուհետ՝ Կատարող)՝, ի դեմս տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.07.2025թ. N 979-Ն որոշումը և «Երևանի հ.109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 26.06.2025թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1.Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047546
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ.Վաղարշյան փ. 24/1շ. 43 բն.
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ Կենտրոն մ/ճ
Հ/Հ 1150015017217234
ՀՎՀՀ 00102911
Տնօրեն՝

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
26.06.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 գնման պայմանագրի
27 .08 .2025թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N 2
26.06.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/555	«Երևանի հ.109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական ծառայություն	-	-	-	-	-	-	-	4 600 000	4 600 000	4 600 000	4 600 000	4 600 000	4 600 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047546
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ.Վաղարշյան փ. 24/1շ. 43 բն.
<<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ Կենտրոն մ/ճ
Հ/Հ 1150015017217234
ՀՎՀՀ 00102911
Տնօրեն՝

_____ Ա. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

BANK AMIO

N 819-01

«26» 08 2025թ

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 460,000 (չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 03.08.2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender5@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-25/3 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Կենտրոն» մ/ճ կառավարիչ՝ Արտյոմ Ղորխմազյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am